С 32-1
А 226

ԱՎԵՏԻՔ ՂԱՄԲԱՐՅԱՆ (15 Կ. աշակերտ)

# ԹՈՒԽՍՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

ՆԿ. Բ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



891.99
2-30

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

891.99Ա
Ղ-30

30 MAY 2011

# ԹՈՒԽՍՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Ճուտերը առավ
մեր Թուխսը պառավ,
հպարտ կռթալով
բակից հեռացավ,
մեծ աղբակույտի
վրա բարձրացավ
ոտները շարժեց,
քուջուջ սկսեց։
Փոքրիկ ճուտերն էլ
քայլելով դանդաղ,
մեր ուժեղ Թխսի
հետևից անվախ,





կեր էյին փնտրում
ու մերթ-մերթ կանգնում,
Նորից շարժվելով՝
Նրան հետևում։
Բայց հանկարծ հեռվից,
ուռենու ծառից,
ագռավը տեսավ
ճուտեր կան ու հավ,
շատ ուրախացավ
ու սրտատրոփ
առաջ սլացավ,
դանդաղ սահելով
Թխսին մոտեցավ։

Իսկ Թուխսն այդ գործում
Հնուց վարպետ էր,
պաշտպանվել գիտեր.—
ագռավին տեսավ՝
Հնարը գտավ,
բոլոր ճուտերին
կանչեց իրա մոտ,
Թևերով ծածկեց
ու պատրաստ կանգնեց։



19.06.2013

10804

Ագռավն այդ տեսավ,
սաստիկ զարմացավ,
իրեն ուժ տալով
Նորից վեր թռավ,

Թուխսը կատաղեց,
Թռիչքներ գործեց,
աղմուկ աղաղակ
չորս կողմը լցրեց...



ՊԵՏ ԿՄՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

61244-67

օդի ծալքերում
պտույտներ գործեց
ու ինչպես գնդակ
ուղիղ ցած իջավ։

Մին էլ վոնց յեղավ,—
յես լավ չտեսա,—
ագռավը Թխսի
ճանկումն է ահա։

Ու շատ քիչ անցած,
սև փետուրները
պոկված գզգզված,
կիսամորթ դարձած,
մեր Թխսի ճանկից
հազիվ ազատված,
ագռավը քաղցած
թռչեց հեռացավ
ընկճված, տրտում
վոխը իր սրտում։



Իսկ մի քիչ հետո
աղմուկի ձայնից,
Թխսի շուրջն էյին
խմբվել տներից
թե հին թե նորեկ,
կին ու յերեխեք·
գովում էյին լավ
մեր Թխսին պառավ։



ՀՀ Ազգային գրադարան
NL0399791

ԳԻՆԸ 35 ԿՈՊ

10804

АВЕТИК ГАМБАРЯН

# НАСЕДКА И ВОРОН



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ГИЗ. ССР АРМЕНИ ЕРИВАН 1931

ՊԵՏՀՐԱՏ №1500 ԳՐԱՈՒԼԻՏ. № 6166 ՏԻՐԱԺ 4000 ԿՈՄ. ՊԵՏՏՊՐԱՏԻ ՊԱՏ. № 478